ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ

Սույն հետազոտությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից ղեկավարվող կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհով՝ «Հայկական բիզնես կոալիցիայի» կողմից իրականացվող «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Հայկական բիզնես կոալիցիան», և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ
ARMENIAN BUSINESS COALITION

2019թ. հունիս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
1. ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԱԾ ՓՄՁ-ՆԵՐԻ ԿԱԶՄԸ.....4
2. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՓՄՁ ՈԼՈՐՏԸ.....5
3. ԲԻԶՆԵՍ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.....9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից ղեկավարվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ենթադրամաշնորհի շրջանակներում «Հայկական բիզնես կոալիցիայի» կողմից իրականացվել է ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն, որի ներքո առավել մանրամասն անդրադարձ է կատարվել դատական համակարգի ազդեցությանը ՓՄՁ ոլորտի զարգացման վրա և բիզնես հաշտարարի գրասենյակի ներդրման նախադրյալներին:

Ուսումնասիրության շրջանակներում իրականացվել են առցանց հարցումներ ՓՄՁ սուբյեկտների հետ՝ ներառելով 300 ՓՄՁ-ներ հանրապետության ամբողջ տարածքում: Ուսումնասիրությունն իրականացվել է՝ 2019 թվականի մայիսին: Ուսումնասիրությունը նպատակ է ունեցել ուսումնասիրել բիզնես հաշտարարի գրասենյակի ներդրմանը նախորդող ելակետային իրավիճակը և նախադրյալները:

Համաձայն իրականացված ուսումնասիրության արդյունքների՝ հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 18%-ը չի դիմել դատարան, չնայած նրան, որ բիզնեսի գործունեության ընթացքում նման անհրաժեշտություն առաջացել է: Դատական գործընթացների ժամանակատարությունը, դատական համակարգի նկատմամբ վստահելիության ցածր մակարդակը և բռնագանձման գործընթացների անհուսանելիությունը համարվում են ՓՄՁ-ների կողմից առավել կարևորված խոչընդոտող գործոններ:

ՓՄՁ-ների 88%-ը նշել է, որ անհրաժեշտության դեպքում կնախընտրեին դիմել բիզնես հաշտարարի գրասենյակ: ՓՄՁ-ները կնախընտրեին դիմել հաշտարարի գրասենյակ հարկային և մաքսային մարմինների առաջացող խնդիրների, բիզնես տեսչական ստուգումների, ՏԻՄ-երի հետ առաջացած խնդիրների դեպքում: Առավել քիչ թվով ՓՄՁ-ներ կնախընտրեին դիմել հաշտարարի գրասենյակ գործընկերային վեճերի լուծման համար:

1. ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՓՄՁ-ՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Առցանց հարցմանը մասնակցել են 300 ՓՄՁ-ներ հանրապետության ամբողջ տարածքում: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 39%-ը հիմնադրվել է նախորդ երկու տարիների ընթացքում, 27%-ը՝ 2011-2015թթ. ընթացքում, իսկ 34%-ը մինչև 2010 թվականը (Գրաֆիկ 1): Ըստ աշխատակիցների թվաքանակի ՓՄՁ-ների կազմում 77%-ը եղել են մինչև 5 աշխատող ունեցող: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 12%-ը ունեցել են 6-ից 10 աշխատող, իսկ 8%-ը՝ 11-ից 50: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 3%-ն ունեցել

Գրաֆիկ 1. Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների կազմն ըստ հիմնադրման ժամանակահատվածի



Գրաֆիկ 2. Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների կազմն ըստ շրջանառության ծավալների



են համապատասխանաբար 51-ից 250 աշխատող:

Հետազոտության շրջանակներում ներգրավված ՓՄՁ-ների 93%-ը մինչև 100մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող ՓՄՁ-ներն են: 4%-ն ունեցել են 100 մլն-ից 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն, իսկ 3%-ը՝ 500 մլն-ից 1 500 մլն ՀՀ դրամ: ՓՄՁ-ների 41%-ը տեղակայված են եղել ք. Երևանում

Գրաֆիկ 3. Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների կազմն ըստ աշխատակիցների թվի



Գրաֆիկ 4. Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների կազմն ըստ գործունեության վայրի



(Գրաֆիկ 4)

2. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՓՄՁ ՈԼՈՐՏԸ

Համաձայն Համաշխարհային բանկի «Doing Business» զեկույցի «Պայմանագրերի հարկադիր կատարում» ենթացուցանիշի Հայաստանն այլ երկրների ցանկում 24-րդ տեղում է: Այս ենթացուցանիշն անդրադառնում է արդարադատության գործընթացների որակին, ինչպես նաև ժամանակային և ֆինանսական ծախսերին, որոնք անհրաժեշտ են լուծելու առևտրային վեճերը: Այս ենթացուցանիշի գծով Հայաստանն ունի 70.63 միավոր հնարավոր առավելագույն 100 միավորից[1]:

Համաձայն Ֆրիդոմ Հաուսի կողմից հրապարակված զեկույցների նախկին իշխանությունների օրոք Հայաստանի դատական համակարգը խիստ կախված է եղել իշխող վարչակարգից, իսկ դատական հաշվետվողականության մեխանիզմները եղել են շատ թույլ զարգացած: Կաշառակերությունը և քաղաքական ազդեցության լծակների կիրառությունը բնորոշ են եղել դատական համակարգին, իսկ դատարանները համարվել են երկրում ամենանվազ վստահություն վայելող ինստիտուտներից մեկը[2]: Համաձայն Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների կողմից իրականացված «Կովկասյան բարոմետր» հետազոտության տվյալների՝ հարցմանը մասնակցած հայաստանցիների 59%-ն ամբողջովին կամ մասամբ չի վստահում դատական համակարգին, 23%-ը հայտնել է չեզոք դիրքորոշում և միայն 18%-ն է նշել, որ վստահում է հայաստանյան դատական համակարգին[3]:

Համաձայն Եվրոպական բիզնես ասոցիացիայի կողմից իրականացված «Բիզնեսի համար հիմնական խոչընդոտները Հայաստանում» ուսումնասիրության՝ Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման համար առկա խոչընդոտների թվում են հարկային ստուգումների գործընթացը, մաքսազերծման հետ կապված խնդիրները և դատական համակարգի թափանցիկությունը և անվստահությունը դատական համակարգի նկատմամբ: Այս հետազոտության եզրակացություններից էր այն, որ տեղական և օտարերկրյա ներդրողները դատական համակարգը չեն համարում վստահելի, և կարծում են, որ տեղական դատարանների հետ չափազանց բարդ է աշխատել առանց համապատասխան կապեր ունենալու, ինչի արդյունքում տեղական և օտարերկրյա ներդրողներն իրենց պաշտպանված չեն զգում[4]:

Հայկական բիզնես կոալիցիայի կողմից իրականացված «ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում» զեկույցում նույնպես դատական համակարգի

[1] Տես ավել ին՝ http://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/a/armenia/ARM.pdf
[2] Տես ավել ին՝ https://freedomhouse.org/report/
[3] Տես ավել ին՝ https://www.caucasusbarometer.org/en/cb2017am/downloads/
[4] Եվրոպական բիզնես ասոցիացիա, «Բիզնեսի համար հիմնական խոչ ընդոտները Հայ աստանու մ», սեպ. 2016թ. ,

անկատարությունը և այս համակարգի նկատմամբ վստահության պակասը նշված է որպես գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող գործոններից մեկը Հայաստանում: Կոալիցիայի կողմից իրականացված հետազոտական ծրագրի շրջանակներում առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 30%-ը նշել են, որ ունեն որոշակի խնդիրներ կապված դատական համակարգի պաշտպանության հուսալիության հետ, մյուս մասը չեն առանչվել դատական համակարգի հետ: Դատական համակարգի հետ առնչություն ունեցած ՓՄՁ-ների հիմնական մասը նշել է, որ խնդիր ունի կապված դատական համակարգի նկատմամբ վստահության հետ: Որպես խնդիրներ նշվել են նաև դատական գործընթացների՝ չափից դուրս երկար տևողությունը, փաստաբանական որակյալ ծառայությունների հասանելիության խնդիրը, բռնագանձման գործընթացի անհուսալիությունը: Այսինքն, համաձայն այս ուսումնասիրության, դատական համակարգի հետ որոշակի խնդիրներ ունի յուրքանչյուր 3 ՓՄՁ-ներից մեկը[5]:

Գրաֆիկ 5. Դատական համակարգի պաշտպանության հասանելիությունը որքանով է խոչընդոտող գործող Հայաստանում ՓՄՁ զարգացման համար



Համաձայն այս ուսումնասիրության շրջանակներում ՓՄՁ-ների շրջանում իրականացված առցանց հարցումների արդյունքների՝ ՓՄՁ-ների 12%-ը դատական համակարգի պաշտպանության հասանելիությունը համարում է Հայաստանում ՓՄՁ զարգացմանը լիովին խոչընդոտող գործոն, 23%-ը՝ ավելի շուտ խոչընդոտող գործոն: Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 65%-ի կարծիքով այլ գործոնների համատեքստում դատական համակարգի պաշտպանության հասանելիությունը խոչընդոտող գործոն չի հանդիսանում (Գրաֆիկ 5):

[5] Հայ կական բիզնես կոալ իցիա, «ՓՄՁ ոլ որտի գնահատման հետազոտու թյ ու ն Հայ աստանու մ», 2018թ.

Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 16%-ը բիզնեսի գործունեության ընթացքում երբևէ առնչվել է դատական համակարգի հետ, 18%-ը նշել է, որ չի դիմել դատարան, չնայած նրան, որ բիզնեսի գործունեության ընթացքում նման անհրաժեշտություն առաջացել է՝ ՓՄՁ-ների 66%-ը երբևէ չի առնչվել դատական համակարգի հետ և բիզնեսի գործունեության ընթացքում նման անհրաժեշտություն չի առաջացել (Գրաֆիկ 6)՝

Գրաֆիկ 6. Ձեր բիզնեսի գործունեության ընթացքում առնչվել եք արդյոք դատական համակարգի հետ



ՓՄՁ-ների 18%-ը, որոնք նշել են, որ խուսափել դիմել դատարան, չնայած նրան, որ բիզնեսի գործունեության ընթացքում նման անհրաժեշտություն առաջացել է ներկայացրել են այն գործոնները, որոնցով պայմանավորված է եղել այս որոշումը՝ Մասնավորապես խոչընդոտող գործոններ են հանդիսացել դատական գործընթացի ժամանակատարությունը, դատական գործընթացի հետ կապված անխուսափելի ֆինանսական ծախսերը, դատարանների հանդեպ վստահության պակասը, փաստաբանի որակյալ ծառայությունների դժվար հասանելիությունը (Գրաֆիկ 7)՝

Գրաֆիկ 7. Ինչ գործոններով է պայմանավորված, որ Դուք խուսափել եք դիմել դատարան, երբ բիզնեսի գործունեության ընթացքում նման անհրաժեշտություն առաջացել է



Այն ՓՄՁ-ները, որոնք առնչվել են դատական համակարգի հետ, գնահատել են դատական համակարգի հետ կապված մի շարք բնութագրիչներ։ Համաձայն գնահատման արդյունքների առավել խնդրահարցույց են դատական գործընթացի ժամկետները, դատարանի հանդեպ վստահությունը և բռնագանձման գործընթացի հուսալիությունը։ Դատական գործընթացի ժամկետները լիովին բացասական են գնահատել դատական գործեր ունեցած ՓՄՁ-ների 64%-ը, 15%-ը՝ գնահատել են «ավելի շուտ բացասական»։ Այսինքն, ՓՄՁ-ների շուրջ 80%-ը դժգոհ է դատական գործընթացների ժամանակատարությունից։ Հաջորդիվ առավել բացասական է գնահատվել բռնագանձման գործընթացների հուսալիությունը. այս գործընթացների դժգոհ է հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների շուրջ 70%-ը։ Շուրջ այսքան ՓՄՁ-ներ էլ բացասական են գնահատել դատական համակարգի նկատմամբ վստահելիությունը։ Համեմատաբար միջին գնահատականներ են տրվել որակյալ փաստաբանական ծառայությունների հասանելիության և դատական գործընթացի ֆինանսական մատչելիության բնութագրիչներին (Գրաֆիկ 8)։

Գրաֆիկ 8. Դատական համակարգի հետ առնչության Ձեր նախկին փորձից ելնելով՝ ընդհանուր առմամբ ինչպես կգնահատեք դատական համակարգի հետ կապված հետևյալ բնութագիչները



3. ԲԻԶՆԵՍ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Առցանց հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների 60%-ը նշել է, որ տեղյակ չէ Հայաստանում գործող պետական կամ տեղական արտադատարանական կառույցների վերաբերյալ, 37%-ը՝ տեղյակ է, իսկ 2%-ը է նշել, որ Հայաստանում այդպիսի կառույցներ չեն գործում (Գրաֆիկ 9)։

Գրաֆիկ 9. Տեղյակ եք արդյոք Հայաստանում գործող արտադատարանական կառույցների վերաբերյալ



Հարցին՝ եթե Հայաստանում գործեր բիզնես հաշտարարի (օմբուսմենի) գրասենյակ, ապա անհրաժեշտության դեպքում կդիմեիք այդ կառույցին, հարցման մասնակիցների 88%-ը տվել է դրական պատասխան, և միայն 12%-ն է նշել, որ այդպիսի հնարավորությունից չէր օգտվի (Գրաֆիկ 10):

Գրաֆիկ 10. Եթե Հայաստանում գործեր բիզնես հաշտարարի գրասենյակ, ապա կդիմեիք այդ կառույցին



Որպես բիզնես հաշտարարի գրասենյակ դիմելու նախապատվության հիմնավորում ՓՄՁ-ները նշել են մի շարք գործոններ, մասնավորապես դատարան դիմելու ծախսատար և ժամանակատար լինելու հանգամանքը, դատական համակարգի կոռումպացվածությունը, դատական համակարգի նկատմամբ վստահության պակասը և այլն։ ՓՄՁ-ները նաև նշել են, որ հաշտարարի գրասենյակը վեճերի լուծման առավել «փափուկ» տարբերակ է ի տարբերություն դատարանը, ինչպես նաև հաշտարարի գրասենյակում հնարավոր է ստանալ խորհրդատվություն։

Ինչո՞ւ կնախընտրեիք դիմել բիզնես հաշտարարի (օմբուսմենի) գրասենյակ

ՆՇՎԱԾ ՊԱՏՃԱՌՆԵՐ
Դատարան դիմելը ծախսատար է
Դատարան դիմելը ժամանակատար է
Հաշտարարի գրասենյակն ավելի «փափուկ» տարբերակ է քան դատարանը
Դատարանում կոռուպցիան ակնհայտ է, իսկ հաշտարարի գրասենյակում՝ դեռ ոչ
Կարող եմ ստանալ խորհրդատվություն հաշտարարի գրասենյակում
Ավելի արագ կլինի գործընթացը
Ունեմ մասնագիտական կարողությունների պակաս
Չեմ վստահում դատական համակարգին

Հարցին, թե ինչպիսի խնդիրների դեպքում կնախընտրեիք դիմել բիզնես հաշտարարի գրասենյակ, հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների հիմնական մասը նշել են հարկային և մաքսային ոլորտների/կառույցների հետ առաջացած խնդիրների դեպքում (տրված պատասխանների 43% դեպքում)։ Հաջորդիվ ՓՄՁ-ները կնախընտրեին օգտվել հաշտարարի ծառայություններից բիզնեսում տեղի ունեցող տեսչական ստուգումների ընթացքում (տրված պատասխանների 25% դեպքում), թույլտվությունների, լիցենզիաների ստացման համար առաջացած խոչընդոտների դեպքում (տրված պատասխանների 19% դեպքում)։ ՓՄՁ-ների մի մասն էլ նշել է, որ կդիմեր հաշտարարի գրասենյակին ՏԻՄ-երի հետ կապված խնդիրների դեպքում (տրված պատասխանների 13% դեպքում)։ Առավել քիչ թվով ՓՄՁ-ներ կդիմեին հաշտարարին գործընկերների հետ ֆինանսական վեճերի առաջացման դեպքում (տրված պատասխանների 1% դեպքում)։ Այսպիսով, ՓՄՁ-ները հաշտարարի գրասենյակի գործառույթների շրջանակն առավելապես տեսնում են ՓՄՁ-պետական կառավարման/տեղական ինքնակառավարման մարմիններ հարաբերությունների կարգավորման շրջանակներում և առավել քիչ՝ գործընկերային վեճերի լուծման ոլորտում (Գրաֆիկ 11)։

Գրաֆիկ 11. Ինչպիսի խնդիրների դեպքում կնախընտրեիք դիմել բիզնես հաշտարարի գրասենյակ



Այն ՓՄՁ-ները, որոնք նշել են, որ չէին ցանկանա դիմել հաշտարարի գրասենյակ, որպես հաշտարարի գրասենյակին չդիմելու պատճառներ նշել են, որ կառույցը դեռևս կայացած չէ և վստահություն չունի, ինչպես նաև արդյունավետ չեն համարում երրորդ կողմի միջնորդությունը։

Ինչո՞ւ չէիք նախընտրի դիմել բիզնես հաշտարարի (օմբուսմենի) գրասենյակ

ՆՇՎԱԾ ՊԱՏՃԱՌՆԵՐ
Երաշխիք չկա, որ իրապես կպաշտպանեն հաճախորդի շահերը
Կարող եմ ինքնուրույն լուծել առաջացած խնդիրները
Երրորդ կողմի միջնորդությունն արդյունավետ չէ
Կառույցը դեռևս կայացած չէ
Պետական բոլոր կառույցներին դիմելը ապարդյուն է և ժամանակատար
Կառույցը դեռևս չունի վստահություն